


**45539**

45540-41



Հ Ա Մ Ա Ռ Օ Տ

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ

43539

ՎԱՐԴԱՊԵՆՆԻԹԻՆ

Սեպտեմբեր 1874 թ. արժույթի

նախարար Հովհաննես Բաղդասարյան

ԱՍՏԻՍՏՆԷ

(1874)

Արժույթի նախարար

Քրիստոնէայ մը շէ կրնար ըսել, թէ եւ  
 Ուղղփա հասարակ ին ճանչնամ, եւ շէ կըր-  
 նար յոյս ունենալ յաւիտենական քրիստոնէան  
 հասնելոս, եթէ որ շէ քիտեր կամ շէ լանար սոր-  
 վելա Քրիստոնէական հասարոյ ճշմարտութիւն-  
 ները եւ քրիստոնէան հասնելոս համար հարկաւոր  
 եղած բաները, թէ եւ մեղսին եւ մեղաց ա-  
 ռիթներին պէտք եղածին պէս լսինայ եւ հե-  
 առ քաշիւն : Այս պարճառաւ թէ՛ Ուղա-  
 փառ հասարակ ճանչնալան մէկ ապացոյց մը  
 ըլլալոս համար, եւ թէ՛ յաւիտենական քրիս-  
 տոնէան հասնելոս ապահով իրաւական մը ըլլալոս  
 համար ամեն Քրիստոնէի քիտնալը անհրաժեշտ  
 պարտք եղած ճշմարտութիւնները այս Համ-  
 ար Քրիստոնէականին միջոցաւ սորվեցնելա-  
 լանք ըրեր ենք նէ ալ, մեր մտքը՝ մեա Քրե-



Եւ այնպէս

Handwritten red scribbles at the top of the page.

Large red scribbles and a purple ink blot on the left side of the page.

ընդհանուր սորվելու ասին ունեցողներուն  
ծրույթներն պարտաւ պալ զէ երբեք, այլ ա-  
րեն լռանեցողներուն եւ ընդունակութեաննին որք-  
էոր եզրողներուն դիւրութեան եւ քաջաւերո-  
ւեան պալ. ահա՛ այս է մեր մէկ հարիչ վախ-  
ճանը :



ՔՐԻՍՏՈՆԷՍԱԿԱՆ

Վ Ա Ր Դ Ս Պ Ե Տ Ո Ւ Թ Ի Ի Ն

ԳԼՈՒԽ Թ.

Աստուծոյ եւ երէն Անշնաց շքոյ :



Հարցումն : Աստուած ի՞նչ է :

Պատասխան : Աստուած ամենա-

կատարեալ էակ մըն է, երկնի եւ  
երկրի ստեղծողը եւ ամեն բանին  
Տէրն ու կառավարողը :

Հոյ . Աստուած քանի՞ է :

Պի . Աստուած մի է :

Հոյ . Աստուծոյ անձերը քանի՞ են :

Պի . Աստուծոյ անձերը երեք են :

Հոյ . Աստուծոյ այս երեք ան-  
ձերու անունները որո՞նք են :

ՊԻ. Հայր Աստուած, Որդին  
Աստուած, Հոգին Սուրբ Աստուած

ՀՅ. Աստուծոյ այս երեք ան-  
ձերէն, որք աւելի առաջ կամ ա-  
ւելի մեծ, կատարեալ ու ողոր-  
մած է:

ՊԻ. Աստուծոյ երեք անձինքն  
ալ մէկզմէկու հաւասար են:

### ԳԼՈՒԽ Բ.

Քրիստոսի Տեառն Քրոյ Տարեղոյնեանը  
Լրոյ.

ՀՅ. Աստուծոյ երեք անձերէն  
որք մարդ եղաւ կամ մարմնացաւ:

ՊԻ. Ամենասուրբ Երրորդու-  
թեան երկրորդ Անձը, որ է Որդին  
Աստուած, մարդ եղաւ, այսինքն  
մեզի պէս հոգի եւ մարմին առաւ:

ՀՅ. Որդին Աստուծոյ յումմէ՞  
մարմին առաւ:

ՊԻ. Ամենասուրբ Երրորդու-  
թեան երկրորդ անձը, այսինքն Որ-  
դին Աստուած յԱմենասուրբ Կու-  
սէն Մարիամայ Հոգւոյն Սրբոյ զօ-  
րութեամբը մարմին առաւ:

ՀՅ. Մարմնացեալ Որդւոյն Աս-  
տուծոյ ի՞նչ անուն կը տրուի:

ՊԻ. Մարմնացեալ Որդին Աս-  
տուծոյ Յիսուս Քրիստոս կը կոչուի:

ՀՅ. Յիսուս Քրիստոս քանի՞ անձ  
ունի:

ՊԻ. Յիսուս Քրիստոս մի անձ  
ունի, որ է Անձն Աստուածային Որդ-  
ւոյն Աստուծոյ:

ՀՅ. Յիսուս Քրիստոս քանի՞ բը-  
նութիւն ունի:

ՊԻ. Յիսուս Քրիստոս երկու բը-  
նութիւն ունի, այսինքն Աստուածա-  
յին եւ մարդկային:

Հց. Արդին Աստուած ի՞նչու համար մարդ եղաւ :

ՊԻ. Արդին Աստուած մարդ եղաւ զմեզ սատանային գերութենէն ազատելու համար, որո՞ւն տակ ինկած էինք մեր Նախահօր Աղամայ անհնազանդութեան պատճառաւ :

Հց. Յիսուս Քրիստոս զմեզ սատանային գերութենէն ի՞նչպէս ազատեց :

ՊԻ. Յիսուս Քրիստոս իր սուրբ չարչարանքներովը ու խաչին վրայ մեռնելովը՝ զմեզ սատանային գերութենէն ազատեց :

Հց. Ո՞ր օրը խաչուեցաւ և մեռաւ :

ՊԻ. Յիսուս Քրիստոս Աւագ Ուրբաթի օրը խաչուեցաւ եւ մեռաւ :

Հց. Ե՞րբ յարութիւն առաւ :

ՊԻ. Յիսուս Քրիստոս Տէրն մեր

երեք օրէն ետքը Չատիկին օրը յարութիւն առաւ :

Հց. Ո՞ր օրը երկինք ելաւ :

ՊԻ. Յիսուս Քրիստոս իր յարութենէն քառասուն օր ետքը Համբարձման օրը երկինք ելաւ :

Հց. Հիմայ Յիսուս Քրիստոս Տէրն մեր ո՞ւր կը գտնուի :

ՊԻ. Քրիստոս Տէրն մեր իր Աստուածութեամբը ամեն տեղ կը գտնուի, իսկ մարդկութեամբը յԱրքայութեան եւ Ամենասուրբ Հաղորդութեան խորհուրդին մէջ կը գտնուի :

Հց. Արդեօք Քրիստոս մէյ մըն ալ աշխարհք պիտի գայ : X

ՊԻ. Այո՛, Քրիստոս Տէրն մեր պիտի գայ աշխարհքիս վերջը, կենդանիները ու մեռեալները դատելու համար :

ԳԼՈՒԽ Գ .

Հասարակ լայ :

Հ. Դու Բրիստոնեայ ես :

Պ. Այո՛, Բրիստոնեայ եմ շը-  
նորհօքն Աստուծոյ :

Հ. Ի՞նչ կ'իմանաս Բրիստոնեայ  
ըսելով :

Պ. Բրիստոնեայ կ'ըսուի անոր  
որ Մկրտութեան խորհուրդը ընդու-  
նելով, եւ հաւատալով Յիսուսի Քր-  
իստոսի Տեառն մերոյ քարոզած հա-  
ւատքին, անոր հետեւող կ'ըլլայ ք

Հ. Բրիստոնէի նշանն ի՞նչ է :

Պ. Բրիստոնէի նշանն Սուրբ  
Խաչն է :

Հ. Ուրեմն խաչակնքէ՛ զքեզ  
որ տեսնամ :

Պ. Յանուն Հօր եւ Որդւոյ եւ  
Հոգւոյն Սրբոյ . Ամէն :

Հ. Զքեզ ո՞վ ստեղծեց :

Պ. Զիս Աստուած ստեղծեց :

Հ. Աստուած զքեզ ինչո՞ւ ըս-  
տեղծեց :

Պ. Աստուած զին ստեղծեց  
որ զինքը ճանչնամ, զինքը սիրեմ,  
անոր ծառայեմ, և այսպէս երկնից  
արքայութիւնը ժառանգեմ :

ԳԼՈՒԽ Դ .

Խորհուրդներու լայ :

Հ. Յիսուսի Բրիստոսի Տեառն  
մերոյ հաստատած Խորհուրդները  
քանի՞ են :

Պ. Բրիստոսի Տեառն մերոյ  
հաստատած խորհուրդները եօթն են  
այսինքն . Մկրտութիւն, Դրոշմ,  
Հաղորդութիւն, Ապաշխարութիւն,  
Վերջին օծումն, Կարգ քահանայու-  
թեան եւ Պսակ :

ՀԳ. Ի՞նչ է Մկրտութիւնը :

ՊԻ. Մկրտութիւնը մէկ Խորհուրդ մըն է, որ կը սրբէ ան սկզբնական մեղքը, որ մեր Նախահօր Ազամայ մեղքէն յառաջ եկած է, եւ ամենեւեւ վրայ կը գըճանուի, եւ զանի ջնջելով զմեզ Աստուծոյ Որդեգիր եւ Եկեղեցւոյ զաւակ կ'ընէ :

ՀԳ. Ի՞նչ է Հաղորդութիւնը կամ Սրբութիւնը :

ՊԻ. Հաղորդութիւնը կամ Սրբութիւնը մէկ Խորհուրդ մըն է, որ հացին եւ զինւոյն տեսակներուն ներքեւը Քրիստոսի Տեառն մերոյ մարմինը եւ արիւնը, հոգին ու Աստուածութիւնը իրապէս եւ հշմարտապէս ներկայ կը գտնուի :

ՀԳ. Սրժանապէս հաղորդուելու համար քանի՞ բան պէտք է :

ՊԻ. Սրժանապէս հաղորդուելու համար չորս բան պէտք է. նախ

պէտք է հաւատալ որ Յիսուս Քրիստոս Տէրն մեր Սրբութեան Խորհուրդին մէջ ճշմարտապէս ներկայ կը գտնուի : Երկրորդ՝ պէտք է ամեն մեղքերէն սրբուած ըլլայ : Երրորդ՝ առջի կէս զիշերէն սկսելով պէտք է ծով պահել, առանց նաեւ ամենափոքր բան մը ուտելու կամ խմելու : Չորրորդ՝ Սրբութիւն առնելէն առաջ ու առնելէն ետքը ջերմեանդարար աղօթք ընելու է :

Ճ. Ապաշխարութիւնն ի՞նչ է :

ՊԻ. Ապաշխարութիւնն մէկ Խորհուրդ մըն է որ կը ջնջէ ամեն մեղքերը որ Մկրտութենէն վերջը գործեր ենք :

ՀԳ. Սրժանապէս խոստովանելու համար քանի՞ բան պէտք է :

ՊԻ. Սրժանապէս խոստովանելու համար հինգ բան պէտք է. նախ մեղքերնիս լաւ մը քննել ու մրտա-

քերնիս բերել : Երկրորդ բոլոր մեղքերնուս վրայ զղջալ : Երրորդ՝ մէյմ՝ ալ մեղք չի գործելու առաջագրու թիւն դնել : Չորրորդ՝ մէկ խոստովանահօր մը առջին ամենն մեղքերնիս խոստովանիլ : Հինգերորդ՝ այն խոստովանահօր գըրած ապաշխարանքը կատարել :

ՀՅ . Մեղքերնիս կարելի եղածին չափ կատարեալ խոստովանելու համար ո՞ր բաներու վրայ քննելու ենք խիղճերնիս :

ՊԻ . Մեղքերնիս՝ կարելի եղածին չափ կատարեալ խոստովանելու համար , պէտք է խղճերնիս քննել Աստուծոյ եւ եկեղեցւոյ պատուիրանքներուն վրայ եւ եօթն գլխաւոր մեղքերուն եւ քրիստոնէութեան եւ ամեն մեկուն իրեն աստիճանին ու վիճակին մասնաւոր պարտքերուն վրայ :

ՀԶ . Այսպէս պատրաստուելէն վերջը , խոստովանահօր առջին երթալու ատեն ի՞նչ ընելու ենք :

ՊԻ . Խոստովանահօր առջին ծունկ չօքելով եւ երեսնիս խաչակնքելէն վերջը ըսելու ենք այս Աղօթքը :

Աղօթք :

Խոստովանիմ առաջի Աստուծոյ Ամենակարողի . եւ երանուհւոյ Մարիամու միշտ Կուսին . երանելոյն Միքայէլի Հրեշտակապետին . երանելոյն Յովհաննու Մկրտչի , Սրբոյ Առաքելոյն Պետրոսի եւ Պօղոսի , եւ Սրբոյ Հօրն մերոյ Պրիգորի Լուսաւորչին եւ ամենայն Սրբոյ , եւ առաջի քո , Հայր Սուրբ , քանզի մեզայ յոյժ խորհրդով , բանիւ եւ գործով . վայ ինձ , վայ ինձ , եւ յաւէտ վայ ինձ :

+

Հ9. Մեղքերնիս խոստովանելէն վերջը Ի՞նչ ընելու ենք :

ՊԻ. Մեղքերնիս խոստովանելէն վերջը, խոստովանահօր տուած խորատները | եւ ազգարարութիւնները մտադրութեամբ մտիկ ընելով վերջէն զղջումնիս անոր յայտնելու ենք, կամ զղջման ներգործութիւնը ըսելով եւ կամ ուրիշ նշանով մը :

Հ9. Ըսէ՛ ուրեմն զղջման ներգործութիւնը : +

Ներգործութիւնն շղջման :

ՊԻ. Ո՛վ Աստուած իմ, ինչու որ դուն անհուն ու անսահման բարի ես եւ ծայրագոյն սիրոյ արժանի ես, եւ կ'ատես մեղքը, անոր համար ես ալ բոլոր իմ գործած մեղքերուս վերայ կը զղջամ ու կը ցաւիմ, անոնցմով գքեզ վշտացուցած ըլլալուս համար : Ու քու շնորհացդ օգնակա-

նութեամբը հաստատապէս կ'առաջադրեմ ասկեց վերջը ա՛լ բնաւ մեղք չի գործելու, եւ մեղքի առիթներէն փախչելու : +

ԳԼՈՒԽ Ե .

Եկեղեցւոյ ձեռք :

Հ9. Ի՞նչ է Եկեղեցին :

ՊԻ. Եկեղեցին է այն հաւատացեալ ժողովը, որ բոլոր Քրիստոնէից հովիւ ու գլուխ եղող Հռովմայ Սրբազան քահանայապետին հնազանդութեանը տակ կը գրանուին : +

Հ9. Յաւատենական փրկութեան հասնելու համար Հռովմէական Սուրբ Եկեղեցւոյն զաւակ ըլլալը հարկաւոր է :

ՊԻ. Այ՛ո ինչու որով որ Հռով-

մէական Սուրբ Եկեղեցւոյն զաւա-  
կը չէ, անոր փրկութիւնն չի կայ:

✠

ԳԼՈՒԽ Զ.

Ստորին-իւնն Վրայ:

Հց. Քրիստոնէի մը ի գործ դը-  
նելու պարտական եղած առաքինու-  
թիւններն որոնք են:

Պի. Քրիստոնէին ի գործ դնել  
պարտական եղած առաքինութիւն-  
ներն երեք են այսինքն. Հաւատք,  
Յոյս, Սէր եւ բարեգործութիւն:

Հց. Ըսէ՛ ուրեմն Հաւատոյ ներ-  
գործութիւնը:

Ներգործութիւն հաւատոյ:

Պի. Հաստատապէս կը հաւա-  
տամ ո՛վ Աստուած իմ, ինչու որ

Պուն յաւիտենական և անսխալ ճըշ-  
մարտութիւն ըլլալով այսպէս յայտ-  
նեցիր Սուրբ Հովմէական Եկեղեց-  
ւոյն, և նոյն Սուրբ Եկեղեցին կա-  
ռաջադրէ մեզի, որ Աստուած մի  
միայն է, և երեք հաւասար Անձինք  
ունի, որ կը կոչուին Հայր և Որդի  
և Հոգի Սուրբ. և թէ Որդին Աս-  
տուած մարդ եղաւ ու մեզի հա-  
մար խաչին վրայ մեռաւ ✠ յարու-  
թիւն առաւ ու երկինքը համբար-  
ճաւ, և աշխարհիս ետքը պիտոր դայ  
կենդանի և մեռած մարդիկները դա-  
տելու, արդարներուն յաւիտենական  
վարձք տալով և մեղաւորաց յաւի-  
տենական տանջանք ✠ Պարձեալ՝ այս  
պատճառիս համար ինչ որ նոյն Սուրբ  
Եկեղեցին կը հաւատայ ու կը սորվե-  
ցնէ, ես ալ կը հաւատամ ու կ'ըն-  
դունիմ, ու մերժածներն ալ կը  
մերժեմ,

Հօ . Ըսէ՛ նաև Յուսոյ ներգոր-  
ծութիւնը :

Ներգործութիւն Յուսոյ :

ՊԻ . Ո՛վ Աստուած իմ, ինչու որ  
Դուն ամենակարող բարութիւն ես,  
կը յուսամ որ Տեառն մերոյ Յիսու-  
սի Քրիստոսի չարչարանաց ու մահ-  
ւան արդիւնքներովը՝ կուտաս ինծի  
յաւիտենական կեանքը, զորն որ Դուն  
անզեղ չաւատարիմ ըլլալով խոստ-  
մանցդ մէջ ի խոստացար անոր՝ որ  
բարեպաշտ քրիստոնէի պէս կ'ապրի-  
ինչպէս որ ես ալ կ'առաջադրեմ այն-  
պէս ապրելու Քու սուրբ օգնակա-  
նութեամբդ :

Հօ . Ըսէ՛ նաև սիրոյ ներգոր-  
ծութիւնը :

Ներգործութիւն Սիրոյ :

ՊԻ . Ո՛վ Աստուած իմ, ինչու որ

Դուն Մայրագոյն բարի ես և անհուն  
Սիրոյ արժանի, ես ալ կը սիրեմ ըզ  
Քեզ բոլոր սրտանց և ամեն բանէ  
վեր, և Քու սիրոյդ համար կը սի-  
րեմ ու կուզեմ սիրել իմ ընկերներս  
իմ անձիս պէս :

Հօ . Ո՞րն է այն աղօթքը, որն  
որ ամեն քրիստոնեայ պէտք է որ  
գիտնայ եւ զրուցէ :

ՊԻ . Ամենքնիս ալ պարտական  
ենք գիտնալու եւ ըսելու Յիսուսի  
Քրիստոսի Տեառն մերոյ սորվեցու-  
ցած տէրունական աղօթքը, որ է

Հայր մեր՝ որ յերկինս ես, սուրբ  
եղիցի անուն քո, եկեացէ արքայու-  
թիւն քո, եղիցին կամք քո որպէս  
յերկինս և յերկրի . Չհաց մեր հա-  
նապազորդ տուր մեզ այսօր, և թող  
մեզ զպարտիս մեր, որպէս և մեք  
թողումք մերոց պարտապանաց և մի

տանիր զմեզ ի փորձութիւն այլ փրկ-  
կեա՛ զմեզ ի չարէ : Զի քո է արքա-  
յութիւն եւ զօրութիւն եւ փառք  
յաւիտեանս . ամէն :

—  
ՀԳ . Աստուծոյ պատուիրանքնե-  
րը քանի՞ են ,

ՊԻ . Աստուծոյ պատուիրանք-  
ները տասն են : +

Տասնաբանեայ պարտերան :

Ա . Ես եմ Տէր Աստուած քո .  
մի՛ ունիցիս այլ աստուած առաջի  
իմ :

Բ . Մի՛ առնուցուս զանուն Աս-  
տուծոյ ի վերայ սնտեաց :

Գ . Յիշեա՛ զօր շաբաթուն (այս-  
ինքն զկիրակէս եւ զտօնս) սրբել  
զնա :

Դ . Պատուեա զհայր քո եւ ըղ-  
մայր :

Ե . Մի՛ սպանաներ :

Զ . Մի՛ շնար :

Է . Մի՛ գողանար :

Ը . Մի՛ սուտ վկայեր :

Թ . Մի՛ ցանկար կնոջ ընկերի  
քո :

Ժ . Եւ մի՛ ամենայնի որ նորա է :

—  
ՀԳ . Սուրբ Եկեղեցւոյ պատուի-  
րանքները քանի՞ են :

ՊԻ . Սուրբ Եկեղեցւոյ պատուի-  
րանքները վեց են : Այսինքն՝

Ա . Կիրակի ու Տօն օրերը Սուրբ  
Պատարագ տեսնել : +

Բ . Գոնէ տարին անգամ մը խոս-  
տովանիլ :

Գ . Գոնէ տարին անգամ մը՝  
Զատկին , հաղորդուիլ :

Դ . Մեծ պահքը եւ այլ հրա-  
մայուած պահքերը պահել :

Ե. Եկեղեցիէն արգիլուած ա-  
տենները հարսնիք չընել :

Զ. Ունեցած ստացուածքին տա-  
սանորդը ազքատաց ողորմութիւն  
տալ :

+

Հց. Այս պատուիրանները պա-  
հելով ապրողներուն Աստուած ի՞նչ  
հատուցում պիտի տայ :

ՊԻ. Ով որ Աստուծոյ և Եկե-  
ղեցւոյ պատուիրանքները կատար-  
եալ պահելով ապրելու ըլլայնէ, Աս-  
տուած անոր մահուընէ վերջը յա-  
ւիտենական արքայութիւնը պիտի  
չնորհէ :

+

Հց. Իսկ այս պատուիրանները  
չի պահողներուն Աստուած ի՞նչ պա-  
տիժ պիտի տայ :

ՊԻ. Ով որ Աստուծոյ և Եկե-  
ղեցւոյ պատուիրանքները չի պահէ  
և անոնց հակառակ կեանք վարելու

ըլլայ, Աստուած անոր մահուընէ  
վերջը յաւիտենական դժոխք պիտոր  
տայ :

Հց. Իսկ անոնք որ ծանր մեղք  
մը չունին, հապա միայն ներելի մեղ-  
քով կամ գործած մեղքերնուն ա-  
պաշխարանքը դեռ չի վճարած մեռ-  
ներու ըլլան, անոնց վիճակը ի՞նչ  
կ'ըլլայ :

+

ՊԻ. Անոնք որ ներելի մեղք  
միայն, կամ գործած մեղքերնուն  
ապաշխարանքը դեռ չի վճարած կը  
մեռնին, կ'երթան Քաւարան, ուր  
ապաշխարութիւննին կատարելով և  
մեղքերնէն սրբուելով արժանի կ'ըլ-  
լան մտնելու յԱրքայութիւն :

Հց. Գլխաւոր մեղքերը քանի՞  
և որո՞նք են :

ՊԻ. Գլխաւոր մեղքերն եօթն  
են. այսինքն՝

+

- Ա . Հպարտութիւն .  
 Բ . Նախանձ .  
 Գ . Բարկութիւն .  
 Դ . Ազահութիւն .  
 Ե . Բղջախոհութիւն .  
 Զ . Որկրամոլութիւն .  
 Է . Ծուլութիւն :

ՀՐԵՇՏԱԿԱՅԻՆ ՈՂՋՈՒՆԱՏՐՈՒԹԻՒՆ

Ողջոյն քեզ Մարիամ լի շնորհօք : Տէր ընդ քեզ , օրհնեալ ես դու ի կանայս եւ օրհնեալ է պսուղ որովայնի քո Յիսուս :

Սրբուհի Մարիամ , Մայր Աստուծոյ , բարեխօսեա՛ վասն մեր մեղաորացս՝ այժմ եւ ի ժամու մահուան մերոյ : Ամէն :

Handwritten text at the top of the page, possibly bleed-through from the reverse side.

Handwritten text, possibly a signature or name.

Handwritten text, possibly a name or initials.

Handwritten text and a large flourish or signature.

Handwritten text and a large flourish or signature.

Handwritten text, possibly a signature or name.

Handwritten text and a large flourish or signature.

Handwritten arithmetic calculation:  
$$\begin{array}{r} 35 \\ 78 \\ \hline 280 \\ 35 \\ \hline 630 \end{array}$$

Handwritten arithmetic calculation:  
$$\begin{array}{r} 20 \\ 70 \\ \hline 200 \end{array}$$

Handwritten text on the left margin, possibly a list or notes.

ՄԲ Հայագիտական գրադարան



MAL039609

ՄԲ Հայագիտական գրադարան



MAL039591

ՄԲ Հայագիտական գրադարան



MAL039677

